Վիեննայի Մխիթարեան թանգարանի Աւշինի արծաթները. ՀԱ. 1972, էջ 95-110 եւ Վիեննայի Մխիթարեան թանգարանի Լեւոն Գ.ի 1306-1307 պղինձները. ՀԱ. 1972, էջ 225-238, 373-382:

Առանձին հատորով «Ազգային Մատենադարան» թիւ 220, 1982:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան Մատենադարանին ի Վիեննա, Գ. հատոր: ՀԱ.ի մէջ 1977-1983 տարիներուն լոյս տեսած:

Առանձին հրատարակուած՝ 1983:

Աստուածաշունչի, Հին եւ Նոր կտակարաններու ամբողջական թարգմանութիւնը աշխարհաբար (արեւմտահայերէն), որ դժբախտաբար կը մնայ անտիպ:

Խմբագրութիւն

ՍԻՐԻԱՆ ԱՔԵՄԵՆԵԱՆ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Յովհաննէս Խորիկեան

Անտիկ աղբիւրներում Սիրիայի նուաճումը վերագրւում է Կիւրոս Մեծին, ընդ որում՝ սիրիացիները եւ ասորեստանցիները յիշատակւում են կողք կողքի[1]: Բաբելոնը նուաճելուց յետոյ՝ Ք. ա. 535 թ., Կիւրոս Մեծը Միջագետքից եւ Եփրատից արեւմուտք ընկած տարածքներից՝ Սիրիայից, Փիւնիկիայից, Անդրյորդանանից, Կիպրոսից եւ Պաղեստինից, ստեղծում է մէկ նահանգ՝ Գուբարուի (հին պարսկերէն՝ Gaubaruva, անտիկ աղբիւրներում՝ Գոբրիաս) կառավարութեամբ, որն այդ պաշտօնում մնում է առնուազն մինչեւ Ք. ա. 525 թ.: Վարչական այս նոր միաւորը, որն ընդգրկում էր նախկին Նորբաբելոնական թագաւորութեան գրեթէ ամբողջ տարածքը, կրում էր Բաբելոն եւ Անդրգետք անուանումը[2]: Ք. ա. 520 թ. վարչական այս միաւորի կառավարիչ է նշանակւում պարսիկ Ուշտանուն, սակայն Ք. ա. մօտ 516 թ. Դարեհ Ա-ն այս սատրապութիւնը բաժանում է երկու մասի. Բաբելոնի կառավարիչ է նշանակւում Ուշտանուն, իսկ Անդրգետքի՝ Թատնայը, ով վարչական առումով ենթարկւում էր Ուշտանուին[3]:

Սատրապութիւնների հերոդոտեան ցուցակում Միջագետքը եւ Եփրատից արեւմուտք ընկած երկրները յիշատակւում են առանձին սատրապութիւններում. առաջինը՝ Բաբելոնը եւ մնացեալ Ասորեստանը, մտնում էին IX սատրապութեան, իսկ Եփրատից արեւմուտք ընկած երկրները՝ V սատրապութեան կազմի մէջ[4]: Վերջինս Գաղատասի նամակում համապատասխանում է πέραν Εὐφράτου «եփրատի միւս կողմում» արտայայտութեանը[5]:

---

1 **Քսենոփոն**, *Կիրոպեդիա*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 2000, էջ 5:

2 **M. W. Stolper**, *The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C.*,- "Journal of Near Eastern Studies", Vol. 48, № 4, 1989, p. 286; **M. Heltzer**, *Some Aspects of Achaemenid Taxation in the V Satrapy (Phoenicia)*, in M. Molina et al. (edd.), Arbor scientiae. Estudios del Proximo Antiguo dedicados a Gregorio del Olmo Lete, "Aula Orientalis", 17-18, 1999-2000, p. 349; **М. А. Дандамаев**, *Политическая история Ахеменидской державы*, Москва, 1985, с. 52; նոյնի՝ *Месопотамия и Иран в VII-IV вв. до н. э.*: Социальные институты и идеология, Санкт-Петербург, 2009, с. 54, 72; նոյնի՝ *Ахеменидская империя: социально-административное устройство и культурные достижения*, Санкт-Петербург, 2013, с. 56; **T. Bryce**, *Ancient Syria*, Oxford University Press, 2014, p. 149. Մասնագիտական գրականութեան մէջ այն կարծիքը, թէ Գուբարուն նոյնանում է Կուտիումի Ուգբարուի հետ, ով ղեկավարել է Կիւրոս Մեծի ժամանակ Բաբելոնի գրաւումը, պէտք է մերժել, քանի որ Ուգբարուն վախճանուել է Բաբելոնի գրաման տարում՝ Ք. ա. 539 թ. (**М. А. Дандамаев**, *Месопотамия и Иран...*, с. 72): Որոշ ուսումնասիրողներ նոյնիսկ հակուած են Ուգբարուին, Գոբրիասին եւ Դարեհ Ա-ի նոյնանուն նիզակակրին նոյն անձնաւորութիւնը համարել (տե՛ս **М. А. Дандамаев**, *Политическая история Ахеменидской державы*, с. 45):

3 **M. W. Stolper**, *The Governor of Babylon and Across-the-River in 486 B. C.*, p. 289; **М. А. Дандамаев**, *Месопотамия и Иран...*, с. 54. Ուշտանուի եւ Թատնայի նոյնացումը չի հաստատւում (տե՛ս **A. F. Rainey**, *The Satrapy "Beyond the River"*,- "Australian Journal of Biblical Archaeology", 1969, № 1/2, p. 53):

4 **Հերոդոտոս**, *Պատմութիւն իմը գրքից* (այսուհետեւ՝ Հերոդոտոս), թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1986, III, էջ 91-92:

5 **A. T. Olmstead**, *A Persian Letter in Thucydides*,- "The American Journal of Semitic Languages and Literatures", Vol. 49, № 2, 1933, p. 158 (pp. 154-161).

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

Եթէ յունական աղբիւրներում հիմնականում Ասորեստանը եւ Բաբելոնը հաւասարազօր հասկացութիւններ են[6], ապա հին պարսկական աղբիւրներում դրանք յստակօրէն տարբերակւում են: Ասորեստանի անկումից յետոյ նրա անունով սկսում է կոչուել Սիրիան: Այսպէս, Դարեհ Ա-ի Սուզայի արձանագրութիւններից մէկի բաբելոներէն տարբերակում Eber-nāri-ն («Անդրգետք», այսինքն՝ Սիրիա, Փիւնիկիա, Պաղեստին) համապատասխանում է հին պարսկական եւ էլամական Athurā-ին, այսինքն՝ Ասորեստանին: Հետեւաբար՝ վերջինս սեպագիր արձանագրութիւններում յիշատակուող Անդրգետքի մի երկրամասն է, իսկ դա նշանակում է, որ պարսկական արձանագրութիւնների Ասորեստանը նոյնանում է Սիրիային[7]:

Ինչպէս Աքեմենեան տէրութեան վերաբնակեցուած շատ ժողովուրդներ, այնպէս էլ սիրիացիները Բաբելոնում եւ նրա շրջակայքում ունէին բնակավայրեր, որոնցից մէկը Սիպպարի մօտ կոչւում էր Hallab եւ սիրիական Հալէպի կրկնանունն էր[8]:

Սիրիայի վերաբերեալ կարեւոր են Քսենոփոնի տեղեկութիւնները[9], համաձայն որոնց՝ Կիլիկիայի եւ Սիրիայի սահմանը յետագայում յայտնի Դրունք Ասորուոց կամ Պլատանայ լեռնանցքն է, ինչը Հերոդոտոսի տեղեկութիւնների[10] համեմատութեամբ ցոյց է տալիս, որ Սիրիայի սահմանը, նախկինի համեմատութեամբ անցնելով Պոսիդէոն (ներկայիս Բասիտը) քաղաքը, հիւսիսում ընդարձակուել էր ի հաշիւ Կիլիկիայի հողերի[11]:

Քսենոփոնի պատմութիւնից պարզւում է, որ Փիւնիկիայից վերադարձած Աբրոկոմասը դիմադրութիւն ցոյց չի տալիս Կիւրոս Կրտսերին եւ վիթխարի բանակով՝ 30 բիւր զօրքով մեկնում է արքայի մօտ[12]: Ըստ էութեան, Աբրոկոմասը եղել է ամբողջ V սատրապութեան կառավարիչը, քանի որ Աբրոկոմասը գալիս է Եփրատի կողմից[13], այն դէպքում, երբ Դեռնէսը եւ Բելեսիւսը եղել են հիւպարքոսներ, որոնցից առաջինը կառավարում էր Փիւնիկիան ու Արաբիան, իսկ երկրորդը՝ Սիրիան եւ Ասսիւրիան[14]:

Կիւրոս Կրտսերը Դրունք Ասորուոցից՝ Սիրիայի դարպասներից[15], շարժւում է դէպի փիւնիկեցիներով բնակեցուած Միւրիանդոս ծովափնեայ քաղաքը, որտեղից անցնելով 20 փարսախ՝ 110-120 կմ, հասնում է Խալոս՝ Քովէյկ կամ Բալուկ-սու (բառացի՝ «ձկան գետ)[16] գետը, որը յայտնի էր խոշոր եւ ընտիր ձկներով, որոնք սիրիացիների համար սրբազան էին համարւում[17]:

Կիւրոս Կրտսերը, Խալոս գետի հովտից անցնելով 165-180 կմ, հասնում է Դարդաս՝ Ֆար գետի[18] ակունքները, որի մօտ գտնւում էր Սիրիայի տիրակալ Բելեսիւսի պալատը եւ պարտէզը[19]: Քսենոփոնի յիշատակած Սիրիայի տիրակալ Բելեսիւսը նոյնանում է սեպագիր տեքստերում յիշատակուած Բելշունու սատրապին, ով Ք. ա. 429-414 թթ. միջեւ ընկած հատուածում եղել է Բաբելոնի կառավարիչը, իսկ աւելի ուշ՝ Ք. ա. 407-401 թթ., նշանակուել է Անդրգետքի սատրապ[20]: Բելեսիւս անունով Սիրիայի մէկ այլ սատրապ յիշատակում է Դիոդորոս Սիկիլիացին, Արտաքսերքսէս Գ-ի (Ք. ա. 358-338 թթ.) ենթակայութեան տակ[21]:

Դատելով Քսենոփոնի տեղեկութիւններից՝ մինչեւ Եփրատի աջ ափին գտնուող Թափսակոս քաղաքն ընկած տարածքները յոյները համարել են Սիրիա[22]: «Անաբասիսի» յետագայ տեղեկութիւններից պարզւում է, որ Եփրատի գետանցումից մինչեւ Արաքսէս՝ Խաբուր գետը, յոյները շարունակում են համարել Սիրիա եւ միայն Խաբուրից արեւելք նրանք անցնում են Արաբիայով[23]: Այսպիսով, Կիւրոս Կրտսերի երթուղու քննութիւնը սկսած Դրունք Ասորուոցից մինչեւ Արաքսէս-Խաբուր գետը, ցոյց է տալիս, որ յոյն հեղինակի համար Սիրիան տարածուել է նշուած լեռնանցքից մինչեւ Եփրատ գետը, որից յետոյ մինչեւ Խաբուր գետը յոյներն անցել են Ասսիւրիա-Ասորեստանի տարածքով:

Աղբիւրագիտական առումով պարսիկների համար Աթուրան գոնէ Հիւսիսային Միջագետքն է, քանի որ Բեհիստունի արձանագրութիւնում Հիւսիսարեւմտեան Միջագետքում տեղադրուող Իզալան, որը քաղաքական առումով գտնուել է Հայաստանի կազմում[24], յիշատակւում է հէնց Աթուրայի կազմում[25]: Հերոդոտոսը նոյնպէս Ասորեստանը յիշատակում է Հայաստանից դէպի հարաւ[26]: Նկատենք նաեւ, որ համաձայն Հերոդոտոսի, ասորեստանցիներին հելլէններն անուանել են ասորիներ՝ սիրիացիներ, ընդ որում՝ պատմիչի տեղեկութիւնից պարզւում է, որ Բաբելոնը եւս համարուել է Ասորեստանի մասը[27], այսինքն՝ գոնէ ամբողջ Միջագետքը, Եփրատից արեւելք ընկած Սիրիան նոյնացուել են Ասորեստանին:

Քսենոփոնի մէկ այլ աշխատութեան մէջ՝ «Կիւրոպեդիայում», կան բազմաթիւ տեղեկութիւններ, որոնցում Սիրիան եւ Ասորեստանը նոյնացւում են: Քսենոփոնը Սիրիան, այսինքն՝ Ասորեստանը եւ Մեդիան, համարում է սահմանակից երկրներ[28]:

Պատմիչի առանձին տեղեկութիւններից կարելի է եզրակացնել, որ Սիրիան աշխարհագրական առումով փոխարինում է

---

6 Տե՛ս, օրինակ, Հերոդոտոս, I, 188, 192:

7 **М. А. Дандамаев**, *Месопотамия и Иран…*, с. 66.

8 Նոյն տեղում, էջ 364:

9 Քսենոփոն, *Անաբասիս*, թարգմ. Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1970, էջ 17:

10 Հերոդոտոս, III, 91:

11 Մանրամասն տե՛ս Յ. Խորիկեան, *Աքեմենեան Պարսկաստանի Կիլիկեան սատրապութեան տարածքը եւ սահմանները մ. թ. ա. VI-IV դարերում*,- «Վէմ», 2013, թիւ 2, էջ 192:

12 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 17:

13 Նոյն տեղում, էջ 16, 17, 26:

14 Նոյն տեղում, էջ 197: Աբրոկոմասը յիշատակւում է Ք. ա. 385-383 թթ. Եգիպտոսի վերանուաճման ժամանակ (տե՛ս **A. F. Rainey**, *The Satrapy "Beyond the River"*, p. 67; **M. Weiskopf**, *The so-called "great Satrap's revolt"*: 366-360 B.C.,- "Historia", Heft 63, Stuttgart, 1989, p. 39):

15 **Страбон**, *География в 17 книгах*, перевод, статья и комментарии Г. А. Стратановского, Ленинград, 1964, с. 626, 631.

16 *Dictionary of Greek and Roman Geography*, ed. by W. Smith, Vol. I, Boston, 1854, p. 602.

17 Քսենոփոն, *Անաբասիս*, էջ 18:

18 *Dictionary of Greek and Roman Geography*, p. 752.

19 **Xenophon**, *Anabasis*, with an English translation by Carleton L. Brownson, Vol. III, Books I-VII, Cambridge-Massachusetts-London, 1980, Loeb Classical Library, p. 40: Պարսից թագաւորներին Սիրիայում պատկանում էին անտառներ (Աստուածաշունչ, Մատեան Հին եւ Նոր կտակարանների, եբրայական եւ յունական բնագիրներից թարգմանուած, Շտուտգարտ, 1990 (վերահրատարակութիւն 1896 թ. հրատարակութեան), Նէեմի, Բ, 8):

20 **M. W. Stolper**, *The Babylonian Enterprise of Belesys*, Dans les pas des Dix-Milles, Pallas, 43, 1995, p. 217; **М. А. Дандамаев**, *Месопотамия и Иран…*, с. 88.

21 Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVI, 42, p. 46. Բաբելոնի եւ Անդրգետքի, առանձին-առանձին Բաբելոնի (Ակկադի երկրի կառավարիչ), Անդրգետքի սատրապների ցանկը բաբելոնական տեքստերում տե՛ս **M. W. Stolper**, *The Governor of Babylon and Across-the-River…*, pp. 290, 298.

22 **Xenophon**, *Anabasis*, p. 40.

23 Նոյն տեղում, էջ 44, 46:

24 Յ. Խորիկեան, *Հայաստանը եւ Այսրկովկասը Աքեմենեան Պարսկաստանի վարչական բաժանումներում* (Պատմաաշխարհագրական ուսումնասիրութիւն), Երեւան, 2014, էջ 37:

25 **R. Kent**, *Old Persian*. Grammar. Texts. Lexicon. 2nd ed., New Haven, 1953, p. 122. Հմմտ. **E. Herzfeld**, *The Persian Empire*. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968, p. 305.

26 Հերոդոտոս, I, 194:

27 Նոյն տեղում, VII, 63:

28 Քսենոփոն, *Կիւրոպեդիա*, էջ 214:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

ե՛ւ Ասորեստանին, ե՛ւ Սիրիային[29], ինչը համապատասխանում է հին պարսկական սեպագիր արձանագրությունների տեղեկություններին: Քսենոփոնի որոշ տեղեկություններում Սիրիան Ասորեստանն է[30]:

Քսենոփոնը մի ոչ այնքան յստակ տեղեկության մէջ յիշատակում է Ստորին Սիրիան[31], որի անուան տակ թերեւս կարելի է հասկանալ Միջագետքն ամենալայն առումով՝ ներառեալ Բաբելոնը[32]:

Հերոդոտոսից աւելի վաղ Սիրիան՝ երկու քաղաքներով (Կանիւտիս եւ Կարդիւտոս), յիշատակում է Հեկատէոս Միլեթացին[33]:

Սիրիայի մասին կարեւոր տեղեկություններ են հաղորդում Արիանոսը եւ Ռուփոսը: Արիանոսը նոյնպէս յիշատակում է Կիլիկիայի եւ Ասսիւրիայի՝ Ասորեստանի սահմանագլխին գտնուող յայտնի դարպասները[34] Դրունք Ասորւոցը: Վերջինիս մօտ՝ Ասորեստանում երկու օրուայ հեռաւորության վրայ, գտնուել է Սոքոս վայրը[35], որը թերեւս Ռուփոսի Օնքին է[36]:

Ասորեստանի դարպասների մօտ՝ Ասսիւրիայում է գտնուել նաեւ Միւրիանդրոսը[37] Քսենոփոնի Միւրիանդոսը, որը, հաւանաբար, գտնուել է Հռոսուսից հիւսիս: Անշուշտ, աշխարհագրական առումով Հռոսուսը նոյնպէս կապուած էր Կիլիկայի հետ, որի սահմանը հարաւում եղրագծւում էր Ամանոսեան լեռներով, սակայն վարչական եւ ռազմական նկատառումներից ելնելով պարսիկները Սիրիայի սահմանը հիւսիսում հասցրել էին մինչեւ Ամանոսեան լեռները, հետեւաբար՝ Սիրիան հիւսիս-արեւմուտքում շրջափակւում էր Ամանոսեան լեռներով:

Իսոսի ճակատամարտում յաղթանակ տանելուց յետոյ՝ Ալեքսանդր Մակեդոնացին Կէյլեսիրիայի կամ Կոյլեսիրիայի, այսինքն՝ Փիւնիկիայից հիւսիս ընկած մարզի կառավարիչ է նշանակում Մենոնին[38], ում շուտով փոխարինում է Ասկլեպիդորոսը[39]: Սակայն Արիանոսի տեղեկություններից միաժամանակ երեւում է, որ Կէյլեսիրիայի եւ Միջագետքի ասորիների (երկու գետերի՝ Եփրատի եւ Տիգրիսի միջեւ ընկած Սիրիայի[40]) սատրապ էր համարւում Դարեհ Գ-ի մերձաւորներից մէկը՝ Մազէյը, ով մասնակցում է Գաւգամելայի ճակատամարտին[41]: Այս տեղեկությունը ցոյց է տալիս, որ Աքեմենեան տէրության կործանման ժամանակ V սատրապությունը դեռեւս շարունակում էր ընդգրկել Եփրատից արեւմուտք եւ արեւելք ընկած հողերը: Ընդորում, եթէ նկատի ունենանք, որ ճակատամարտին բաբելոնացիների հետ մասնակցել են նաեւ սիտակենները, ապա Եփրատի եւ Տիգրիսի միջեւ ընկած Սիրիայի՝ Ասորեստանի սահմանը հարաւում հասել է մինչեւ Սիտակենէ, այն դէպքում, երբ Հերոդոտոսն ամբողջ Միջագետքը համարում էր Սիրիա[42]: Կէյլեսիրիան Արիանոսի համար Եփրատից արեւմուտք ընկած Սիրիան է՝ Եգիպտոսի եւ Փիւնիկիայի հարեւանութեամբ[43]: Դէպի Թափսակոս եւ Եփրատ շարժուող Ալեքսանդրի համար Փիւնիկիան գտնուում էր նրա երթուղուց հարաւ[44], ինչը համապատասխանում է Քսենոփոնի՝ վերեւում բերուած տեղեկություններին:

Ռուփոսը եւս Դրունք Ասորւոցը համարում է Սիրիա տանող ճանապարհի մուտքը[45]: Ռուփոսի տեղեկություններից կարելի է եզրակացնել, որ Դամասկոսը Սիրիայի գլխաւոր վարչական կենտրոնն[46] էր, որտեղ պահւում էին Դարեհ Գ-ի գանձերը, որոնք գրաւում է Պարմենիոնը՝ նշանակուելով Սիրիայի կառավարիչ[47]: Մէկ այլ տեղում պատմիչը Սիրիայի կառավարիչ է նշում Անդրոմաքոսին, ում սպանում են ապստամբ սամարացիները[48]: Հաւանաբար, կարելի է ենթադրել, որ Արիանոսի եւ Ռուփոսի կողմից միաժամանակ յիշատակուող Սիրիայի սատրապները եղել են ընդարձակ Սիրիայի առանձին շրջանների կառավարիչները, որոնք բոլորը ընդհանուր անունով կոչուել են Սիրիայի սատրապներ: Օրինակ, Պարմենիոնը՝ որպէս Սիրիայի սատրապ, կառավարել է Դամասկոսի շրջանը, իսկ Անդրոմաքոսի մասին յիշատակությունը ցոյց է տալիս, որ վերջինս թերեւս Դամասկոսում փոխարինել է Պարմենիոնին. Անդրոմաքոսի ենթակայության տակ են գտնուել նաեւ սամարացիները, այսինքն՝ նկատի ունենանք գոնէ եթէ ոչ ամբողջ Պաղեստինը, ապա նրա մի մասը:

Ռուփոսը նշում է, որ Ալեքսանդրը Կոյլեսիրիան յանձնում է Անդրոմաքոս Պարմենիոնին[49], այսինքն՝ վերջինս եղել է Դամասկոսի շրջակայքի եւ Պաղեստինեան Սիրիայի կառավարիչը, որին փոխարինում է Մեմնոնը[50]: Հաւանաբար, Անդրոմաքոսը չփոթուել է Ալեքսանդրի յայտնի զօրավար Պարմենիոնի հետ, որը կարճ ժամանակով եղել է Դամասկոսի կառավարիչը: Ալեքսանդրի մահից յետոյ Սիրիան Փիւնիկիայի հետ միասին բաժին է հասնում Լաոմեդոնտոսին[51]. սա ցոյց է տալիս, որ մակեդոնացիների համար այս երկու աշխարհագրական հասկացությունները վարչական առումով շարունակում էին մէկ ամբողջություն ընկալուել:

Ալեքսանդր Մակեդոնացու արշաւանքը նկարագրող պատմիչների երկերում Սիրիան հիմնականում համապատասխանում է Կէյլեսիրիային, որը, ըստ Սկիլաքս Կարիանդացու, ձգւում էր Թափսակոս գետից մինչեւ Ասկալոն քաղաք[52]:

Թափսակոս գետը համապատասխանում է Օրոնտէսին՝ ներկայիս Նար-էլ-Ասիին, հետեւաբար՝ Կոյլեսիրիան տեղադրւում է Լիբանանեան լեռներից արեւելք ընկած տարածքներից մինչեւ Ասկալոն քաղաքը՝ ներառելով նաեւ Պաղեստինը: Փաստօրէն, Սկիլաքս Կարիանդացու տեղեկությունից ստացւում է, որ Կոյլեսիրիան ընդգրկել է Օրոնտէս գետի աւազանը եւ Պաղեստինը, այն դէպքում, երբ իրականում Կոյլեսիրիան (բառացի՝ «դատարկ, սնամէջ, խորին» Սիրիա, սակայն koile բառը սեմական kulla, եբրայերէն kol «ամբողջ, բոլոր բառի յունարէն համարժէքն

29 Նոյն տեղում, էջ 232:
30 Նոյն տեղում, էջ 244:
31 Նոյն տեղում, էջ 241:
32 Հմմտ. անդ, էջ 358:
33 **C. Müller**, *Fragmenta Historicorum Graecorum*, Vol. I, Parisiis, 1841, fr. 261, 262, p. 17.
34 **Arrian**, *Anabasis Alexandri*, with an English translation by E. Iliff Robson, Vol. I, Books I-IV, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, II, 5, 1, p. 138.
35 Նոյն տեղում, II, 6, 1, էջ 142:
36 **Ռուփոս**, *Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը*, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետեւ՝ Ռուփոս), Երեւան, 1987, էջ 310:
37 **Arrian**, II, 6, 1, p. 142:
38 **Արիանոս**, *Ալեքսանդրի արշաւանքը*, «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետեւ՝ Արիանոս), Երեւան, 1987, էջ 71:
39 Նոյն տեղում, էջ 95:
40 **E. Herzfeld**, *The Persian Empire*, p. 305.
41 **Արիանոս**, էջ 97, 101: Տե՛ս **Arrian**, III, 8, 6, p. 246.
42 Հերոդոտոս, IV, 39:
43 **Արիանոս**, էջ 99:
44 Նոյն տեղում, էջ 94:
45 **Ռուփոս**, էջ 295:
46 **Страбон**, с. 700. Հմմտ. նաեւ **Плутарх**, *Александр*, XXIV, "Избранные жизнеописания", т. II, Москва, 1987, с. 358; *Aramaic Documents of the Fifth Century B. C.*, abridged and revised edition by G. R. Driver, Oxford, 1957, p. 28; *The Cambridge Ancient History*, Vol. IV, Cambridge University Press, 1988, pp. 154-155; **T. Bryce**, *Ancient Syria*, p. 149.
47 **Ռուփոս**, էջ 295, 310:
48 Նոյն տեղում, էջ 338:
49 Նոյն տեղում, էջ 328:
50 Նոյն տեղում, էջ 338:
51 Նոյն տեղում, էջ 596:
52 **Скилак Кариандский**, *Периплъ обитаемого моря*,- "Вестник древней истории", 1988, № 2, с. 262.

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

է[53]) ընդգրկում էր Օրոնտէսի վերին հոսանքի շրջանը եւ Լէոնտէս՝ Էլ-Լիտանի գետի աւազանը՝ Լիբանանեան եւ Անտիլիբանանեան լեռների միջեւ, իսկ, այսպէս կոչուած, բուն Սիրիան տարածւում էր Օրոնտէսի աւազանից արեւելք մինչեւ Եփրատ գետը[54] եւ վերջինիս ձախափնեակը:

Ստրաբոնի «Աշխարհագրութիւնում» բազմիցս Սիրիան եւ Ասորեստանը՝ Ատուրիան, նոյնացւում են, եւ Նինուէն համարւում է Սիրիայի մայրաքաղաքը[55]: Ատուրիան Ստրաբոնը համարում է Նինուէի շրջանը[56], եւ ընդհանուր առմամբ Ատուրիան համապատասխանում է Ադիաբենէ երկրին: Բուն Սիրիան Ստրաբոնը տեղադրում է հիւսիսում՝ Կիլիկիայի եւ Ամանոսեան լեռների, արեւելքում՝ Եփրատ գետի եւ հարաւում՝ Եգիպտոսի միջեւ ընկած տարածքում[57]:

Ստրաբոնի տեղեկութիւններից մէկում հարաւից դէպի հիւսիս, հիւսիս-արեւելք ուղղութեամբ յիշատակւում են Եգիպտոսը, Կէյլեսիրիան, Վերին Սիրիան, Բաբելոնը եւ այլն[58], ինչը ցոյց է տալիս, որ Վերին Սիրիան աշխարհագրօրէն նոյնանում է Ասորեստանին: Ի տարբերութիւն Քսենոփոնի՝ Միջագետքի հետ նոյնացուող Ստորին Սիրիայի՝ Ստրաբոնի Ստորին Սիրիան[59] հէնց բուն Սիրիան է, չնայած սպասելի էր, որ Ստրաբոնի համար արեւմուտքում գտնուող բուն Սիրիան պէտք է լինէր Վերին Սիրիան:

Պոլիբիոսը Կոյլեսիրիայի սահմանը հարաւում հասցնում էր էլ աւելի հեռու՝ Գազայից դէպի հարաւ՝ Ռափիա[60], այսինքն՝ Պաղեստինը մտնում էր Կոյլեսիրայի կազմի մէջ:

Համաձայն Դիոդորոս Սիկիլիացու՝ Կիւրոս Մեծի հետ նոյնացուող առասպելական Նինոսը գրաւում է նաեւ Կոյլեսիրիան, որը յիշատակւում է Փիւնիկիայի եւ Կիլիկիայի միջեւ[61], ինչը նշանակում է, որ Կոյլեսիրիան լայն առումով փոխարինում է ամբողջ Սիրիային: Անտիկ հեղինակի մօտ նոյնպէս որոշ դէպքերում Սիրիան փոխարինում է Ասորեստանին[62]: Դիոդորոս Սիկիլիացին յայտնում է, որ Կիւրոս Կրտսերը իր զինուորներին համոզում է, թէ բանակը տանում է ոչ թէ Թագաւորի, այլ Սիրիայի մի քանի սատրապների դէմ, ինչից յետոյ զինուորները խաղաղւում են[63]: Այս տեղեկութեան վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ Սիրիան լայն առումով համապատասխանում է V սատրապութեան եւ Ասորեստանի տարածքին, որոնք կառավարւում էին մի քանի սատրապների

53 Ընդ որում, «ամբողջ Արամ» ('rm klh) աշխարհագրական հասկացութիւնը հիւսիսում ընդգրկում էր Վերին Արամը՝ ներառեալ Արպադ քաղաքը, եւ Ստորին Արամը հարաւային Սիրիայում (kl 'ly 'rm wthth), այսինքն՝ Սիրիայի բոլոր արամէական տարածքները (տե՛ս **B. Mazar**, *The Aramean Empire in its Relations with Israiel*, The Biblical Archaelogist, XXV, 1962, pp. 117-120):

54 **Страбон**, с. 695, 700; **Pliny**, *Natural History*, Vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1947, Loeb Classical Library, V, XVIII, p. 283; XXI, p. 287.

55 **Страбон**, с. 88, 684. Համաձայն Ստրաբոնի՝ սիրիացիներն իրենց անուանում են արամէացիներ (նոյն տեղում, էջ 49), ինչը տուեալ հատուածում, թերեւս, կապուած է Միջագետքի սիրիացիների հետ:

56 Նոյն տեղում, էջ 685:

57 Նոյն տեղում, էջ 694:

58 Նոյն տեղում, էջ 132:

59 Նոյն տեղում, էջ 645, 689:

60 **Polybius**, *The Histories*, with an English translation by W. R. Paton, Vol. III, London, Cambridge, Massachusetts, 1979, Loeb Classical Library, V, 40, 1; 80, 3, pp. 96, 196.

61 **Դիոդորոս Սիկիլիացի**, *Պատմական գրադարան*, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթագրութիւններ Ս. Կրկեաշարեանի, Երեւան, 1985, էջ 17: Տե՛ս նաեւ **Ctesias'** *History of Persia*: Tales of the Orient, translated with commentaries by L. Llewellyn-Jones and J. Robson, London and New York, 2010, p. 115. Կան նաեւ տեղեկութիւններ, որտեղ Փիւնիկիան, Սիրիան եւ Կիպրոսը յիշատակւում են կողք կողքի (նոյն տեղում, էջ 126):

62 **Դիոդորոս Սիկիլիացի**, էջ 26:

63 *Diodori Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, Vol. II, Lipsiae, 1826, XIV, 20, p. 315.

(տուեալ դէպքում նկատի ունենանք սատրապի) եւ հիւպարքոսների կողմից:

Դիոդորոս Սիկիլիացին գրում է, որ Ալեքսանդրի մահից յետոյ Սիրիան բաժին է հասնում Լաոմեդոն Միտիլենացուն[64]: Այս տեղեկութեան համեմատութիւնը Ռուփոսի համապատասխան տեղեկութեան հետ ցոյց է տալիս, որ Լաոմեդոնի իշխանութեան տակ Սիրիայի հետ անցել է նաեւ Փիւնիկիան:

Սկզբնաղբիւրների վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ «Անդրգետքը» սկզբում եղել է աշխարհագրական հասկացութիւն, որն աստիճանաբար ձեռք է բերել վարչաքաղաքական նշանակութիւն: Սողոմոնի տէրութեան նկարագրութեան մէջ այն ունի յստակ աշխարհագրական բովանդակութիւն, քանի որ Սողոմոնը տիրում էր Գետից՝ Եփրատից արեւմուտք ընկած բոլոր թագաւորներին՝ Թափսայից (Թափսակոս) մինչեւ Գազա[65]: Հայոց V դարի աշխարհագրական երկում՝ «Աշխարհացոյցում» նոյնպէս Սիրիա-Ասորիքի սահմանն արեւելքում Թափսակոս քաղաքն է, իսկ Դամասկոսը յիշատակւում է Կոյլեսիրիայի կազմում. ընդ որում, սկզբնաղբիւրում Ասորիքը՝ Սիրիան, աշխարհագրօրէն լրիւ տարբեր է Ասորեստան-Ասսիւրիայից եւ Միջագետքից[66]:

Աշխարհագրական առումով պարսիկների համար Անդրգետք կոչուածը հրէաների համար Այսրգետք էր՝ Գետից այս կողմ, որտեղ կային արքայի կողմից նշանակուած գանձապետներ (հին պարսկերէն՝ *patifrasa - «վերակացու»)[67]: Եփրատից ա-

64 **Դիոդորոս Սիկիլիացի**, էջ 110, 112:

65 Գ Թագաւորաց, Դ 21, 24:

66 *Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց*, հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 35-36:

67 Եզրաս, Դ 9-10, 1, 21. Է, 21: Տե՛ս նաեւ **Ch. Tuplin**, *The Administration of the Achaemenid Empire*, in: Coinage and Administration in the Athenian and Persian Empires: The Ninth Oxford Symposium on Coinage and Monetary History, Oxford, 1987, pp. 116, 118.

68 **A. F. Rainey**, *The Satrapy "Beyond the River"*, p. 51.

69 **R. Kent**, *Old Persian*, p. 166.

70 **J. Yoyotte**, *Les inscriptions hiéroglyphiques. Darius et l'Égypte*, "Journal Asiatique", t. 260, Paris, 1972, f. 3-4, p. 258.

71 **R. Frye**, *Assyria and Syria: Synonyms*, "Journal of Near Eastern Studies", Vol. 51, № 4, 1992, p. 282.

72 **R. Kent**, *Old Persian*, p. 144.

73 Նէեմի, 2, 7-8: Հմմտ. **P. R. Ackroyd**, *The Written Evidence for Palestine, Achaemenid History*, Centre and Periphery, Leiden, 1990, p. 215.

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@

պետութեան կենտրոնը Նինուէից տեղափոխուեց Խառան, այնուհետեւ՝ Կարքեմիշ, պատճառ դարձաւ, որ պարսիկները որպէս Անդրգետքի հոմանիշ գործածեն Ասսիւրիան[74]*:*

Մասնագիտական գրականութեան մէջ սովորաբար Հերոդոտոսի V սատրապութեան ստեղծումը կապում են Քսերքսէսի կողմից Ք. ա. 482 թ. Բաբելոնի ապստամբութիւնը ճնշելու ժամանակի հետ[75]*, ինչը հնարաւոր է:*

Այսպիսով, կատարուած քննութիւնը ցոյց է տալիս, որ հին պարսկական սեպագիր արձանագրութիւնների Աթուրան ընդգրկում էր Անդրգետքը եւ Ասորեստանը, ընդ որում՝ անտիկ աղբիւրների Սիրիան նոյնպէս համապատասխանում էր Անդրգետքին եւ առանձին դէպքերում նաեւ Ասորեստանին: Այս ընդարձակ ու հարուստ սատրապութիւնը Աքեմենեան տէրութեան համար ունէր չափազանց կարեւոր ռազմաքաղաքական եւ տնտեսական նշանակութիւն:

74 **A. F. Rainey**, *The Satrapy "Beyond the River"*, p. 55; **M. A. Дандамаев**, *Ахеменидская империя*, с. 148.

75 **A. T. Olmstead**, *History of the Persian Empire*, Chicago, 1960, p. 237; **A. F. Rainey**, *The Satrapy "Beyond the River"*, p. 57; **M. Dandamaev**, *Achaemenid Mesopotamia: Traditions and Innovations*,- "Achaemenid History", VIII, Continuity and Change, Leiden, 1994, p. 229.

ՓԱՒՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ՎԿԱՅՈՒԱԾ ԻՐԱՆԱԿԱՆ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ

Լաւրենտի Յովհաննիսեան

Ե. դ. հայ մատենագրութեան մէջ վկայուած են իրանական լեզուներից, յատկապէս՝ պարթեւերէնից եւ միջին պարսկերէնից կատարուած բազմաթիւ փոխառութիւններ: Դրանց մեծագոյն մասը հարիւրամեակներ շարունակ գործածուել է բանաւոր, գրերի գիւտից յետոյ՝ նաեւ գրաւոր լեզուում: Ժամանակի ընթացքում դրանք գիտակցուել են որպէս հայերէն բառեր եւ փոխառեալ արմատներով կազմել են բազմաթիւ նոր կազմութիւններ, որոնք գործածական են նաեւ այժմ:

Բուզանդի Պատմութեան[1] *մէջ կան նաեւ իրանական ծագում ունեցող մի շարք բառեր, որոնք հինգերորդդարեան եզակի կամ միակ վկայութիւններն են: Որոշ դիտարկումներով անդրադառնանք այդ կարգի միաւորներին.*

ա) Նոր հայկազեան բառարանում չվկայուած բառեր.

Աշխարաւանդ *«թագաւորական թագի կապը»*, զինդկապետ *«պարսկական զօրապետական մի աստիճան»*, հազարաւուխտ *«պարսկական մի տիտղոս»*, սորակալ *«ախոռապետ»*, տապարիկ/տապրիկ:

ՆՀԲ-ն հազարաւուխտ-ն ըստ երեւոյթին դիտել է որպէս յատուկ անուն, այդ պատճառով էլ այն չի բառարանագրուել: Սորակալ-*ը Աճառեանն ուղղում է* ստորակալ, *պհլ.* stōr *«ձի» բառով կազմութիւն, իսկ* տապրիկ-*ը համարում է յատուկ անուն:*

Տապրիկ-*ը նոյնպէս զօրատեսակի անուանում պէտք է համարել՝ իրան.* *tabar *«կացին» բառով կազմութիւն, որն առկայանում է եւ ՆՀԲ-ում վկայուած* տապարաւոր *բառում:*

բ) Բառեր, որոնք ՆՀԲ-ն վկայակոչում է միայն Բուզանդին.

Աշխարան - *«Իսկ կինն սպանելոյն Փառանձեմն զհանդերձսն պատառեալ, զգէսս արձակեալ, մերկատիտ ի մէջ աշխարանին կոծէր» (IV, ԺԷ):*

Ստ. Մալխասեանը աշխարան-*ը թարգմանել է «սգատեղի». «...վարսերը արձակած, կուրծքը բաց, կոծում էր սգատեղում»:*

Բառի արմատն է աշխար *«ողբ, լաց»: Գրաբարում վկայուած են նաեւ այդ արմատով կազմուած մի շարք բառեր՝* աշխարական, աշխարահեծ, աշխարանուագ, աշխարանք, աշխարապէս, աշխարաւոր, աշխարեմ *(տե՛ս ՆՀԲ):*

Արմ-ում աշխար-*ը չստուգաբանուած բառերի շարքում է: Է. Բենուենիստը այն համարում է իրանական փոխառութիւն՝ պրթ., միջ. պրս.* axšād *«ողբ, լացուկոծ»: Այդ ստուգաբանութիւնն ընդունում է նաեւ Գ. Ջահուկեանը*[2]*:*

Կարծում ենք՝ ի մէջ աշխարանին *բառակապակցութիւնը կարելի է թարգմանել «սգացողների մէջ» կամ «սգացողների մէջտեղը»:* Աշխարան-*ի* ան- *ձեւոյթը այս դէպքում կարող է լինել իրան.* an- *յոգնակերտը:*

1 **Փաւստոսի Բիւզանդացւոյ** *Պատմութիւն Հայոց*, բնագիրը՝ **Գ. Պատկանեանի**, թարգմանութիւնը եւ ծանօթագրութիւնները՝ **Ստ. Մալխասեանցի**, Երեւան, 1987:

2 **Գ. Ջահուկեան**, *Հայերէն ստուգաբանական բառարան*, Երեւան, 2010, էջ 64:

digitised by © National Library of Armenia A.R.A.R.@